Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԶՇՄԱՐԻՏ ՄԵԼԻԹԻՆԸ

891.99
Ա-86

1904
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

891.99
Ժ-86
6 NOV 2017

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԳԱՐԱՆԸ
Հրատ. տիկին Զաքելի

ՀՇՄԱՐԻՏ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

(ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ)

16651

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ»
1904.

20 JUN 2013
41135

Дозвол. ценз. С.-Петербургъ, 12 Апрѣля 1904 г.

4749
41

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

ՃՇՄԱՐԻՏ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ

(Արեւելեան զրոյց)

Ա.

Հին ժամանակներն Ասիայի Մուսուլ քաղաքում ապրում էր մի Ծերունի՝ Մահմեդ-Ալի անունով, որին ամենքը յարգում էին։

Նրան շատերն էին ճանաչում, շատերն էին պատուում անհամար հարստութեան և մեծ առևտրի համար, որ նա ունէր հեռաւոր երկիրների հետ։ Ուրիշները նրան գովաբանում էին հիւրասիրութեան, աղ ու հացի համար։

Նրա շքեղ պալատի դուռը բաց էր ամեն մի օտարականի առաջ։ Մահմեդ-Ալին հաւասարապէս քաղցրութեամբ ընդունում էր թէ՛

հարուստին և թէ աղքատին, թէ՛ օտարակա-
նին և թէ հայրենակցին։ Հիւրին տանում էին
ներս շքեղ զարդարուած դահլիճները և ամէն
կերպ պատուում։

Մի քանիսն էլ Մահմեդ-Ալիին սիրում
էին նրա լուսաւոր մտքի և արդարասէր, պարզ
բնաւորութեան համար։

Ծանր ու դժուար բոպէներին այդ երկրի
խալիֆը շատ անգամ էր Մահմեդ-Ալիին խոր-
հրդակցութեան կանչում և իմաստուն ծե-
րունու խորհուրդները միշտ խաղաղասէր ու
խելօք էին լինում։

Մուսուլի բնակիչները նրա խօսքին այն-
քան մեծ նշանակութիւն էին տալիս, որ իրանց
վէճերն ու կռիւները նրա վճռին էին թող-
նում, և արդարամիտ ծերունին կռուողներին
աշխատում էր հաշտեցնել, իսկ զրկուածներին
ամէն կերպ պաշտպանել։ Նրա վճիռը միշտ
արդար էր համարւում։

Ծերութեան տարիներում Մահմեդ-Ալին
շատ անկեղծ բարեկամներ ունէր այն անձինք-
ներից, որոնց խելացի խորհուրդներ էր տուել
և օգնութիւն հասցրել։

Բայց ծերունին համեստ էր և մարդկանց
առաջ բոլորովին չէր հպարտանում ոչ իւր բա-
րի գործերով, ոչ էլ բարձր անունով, մտածե-

լով թէ այն բոլորը, ինչ որ ունի, ստացել է
Ալլահի ողորմութեամբ։

Մահմեդ-Ալիի ամենամեծ ուրախութիւնն
ու զվարաւոր յոյսը իւր երկու որդիքն էին։

Երբ սրանք մեծացան, Մահմեդ-Ալին ար-
դէն ծերութեան հասակումն էր, նրա մազերն
սպիտակել էին։ Իսկ նրանց մայրը վաղուց ար-
դէն մեռել էր։

Մեծ որդին՝ Ջաֆարը, բարձրահասակ, գե-
ղեցիկ, համարձակ և կտրուկ հայեացքով պա-
տանի էր։ Մարմնով պնդակազմ և առողջ էր,
իսկ բնաւորութեամբ անհանգիստ ու տաք
արիւն. դեռ երեխայութիւնից քաջագործու-
թիւնների և փառքի մասին էր մտածում, աշ-
խատում էր ընկերների մէջ ամէն բանով առաջ-
ինը լինել՝ թէ ուսումով և թէ խաղերով։

Փոքր որդին, Նուրէդդինը խոնարհ ու մտածկոտ էր. նա երգիչ էր և շատ էր մխիթարւում իր երգերով։ Նրա հոգու քնքշութիւնն ու բարութիւնը յայտնի էին Մուսուլի բոլոր աղքատներին և երեխաներին. նրա գործերը համեստ էին և խաղաղ։

Մեծ որդին սիրում էր զէնք, փարթամ ու շքեղ կեանք, ուրախութիւն ու խրախճանք, վատանդալից գործեր։ Իսկ Նուրէդդինը սիրում էր աստղալից գիշերներ լուսնի լուսով լուսա-

ւորուած խաղաղ գետեր, թռչունների առաւօտեան երգը շքեղ բուրաստանում։

Գիշերներն ամբողջ ժամեր նա անց էր կացնում հօր տան տափակ կտուրի վրայ, տարւում էր իր մտքերին, կամ երգեր էր յօրինում Աստուծոյ մեծութեան ու աշխարհի հրաշալիքների մասին։

Երկու եղբայրների մասին խօսելիս մարդիկ ասում էին, որ մեծը նման է այրող-տապող կէսօրին, իսկ փոքրը՝ խաղաղ, պարզ երեկոյի։

Եւ դժուար էր որոշել, թէ եղբայրներից ո՞րն էր աւելի լաւը։

Ծերունի Մահմեդ-Ալին երկուսին էլ սիրում էր հաւասար չափով։ Նա ուրախութեամբ և սրտի բարախումով դիտում էր, թէ ի՞նչպէս են մեծանում իր որդիքը։

—Ես ուզում եմ մեծ մարդ լինել, շատ անգամ ասում էր Ջաֆարն իր հօրը։ Եւ նրա դէմքից երևում էր, թէ ի՞նչպէս հաւատում է իր ոյժերին, ինչպէս անսերկիւղ սիրտ ունի։ Եւ նրա հայեացքը՝ կարծես թէ տեսնելով մի բարձր, երևելի, գրաւիչ բան՝ կրակոտւում էր։

—Այդ հեշտ բան չէ, որդիս, հանդարտ պատասխանում էր հայրը։ Դժուար է հասկանալ և գիտենալ, թէ ի՞նչն է ճշմարիտ մեծութիւնը։

—Ես ուզում եմ բարի լինել, ասում էր Նուրէդդինը վեռ մանուկ հասակում և մտածկոտ հայեացքն ուղղում էր դէպի փողոց։

Այնտեղ, փողոցում, տաք-տապ օրերին արևի տակ ու փոշու մէջ բաց գլուխներով, ծանրաքայլ անցնում են ստրուկները՝ բեռնաւորուած ուղտերի ու էշերի հետ խառն. անցնում են շտապով ծառաներն՝ իրանց տէրերի հրամանը կատարելու։

Խեղճ կանայք փաթաթուած չադրաների մէջ, շտապով վազում են իրանց երեխաների և ամուսինների հոգսը քաշելու։

Ահա գնում է պատռտուած ու կեղտոտ զգեստով մի մուրացիկ տղայ և աչքերը չորս կողմն է դարձնում, որ արևի այրող ճառագայթներից պաշտպանուելու համար մի ստուերոտ տեղ գտնի։

Եւ Նուրէդդինը նայում էր փողոց և ինքն իրան մտածում.

—Ի՞նչքան հով և լաւ է իմ հօր քարէ պալատում և ի՞նչքան շատ բան կայ այստեղ ուտելու, խմելու, հագնելու։ Իսկ այնտեղ, փողոցում, մարդիկ առանց հանգստութեան դէս ու դէն են վազում, հացի հոգս են քաշում։ Եւ կան այնպիսիներ, ինչպէս այդ մուրացիկ տղան,

որ չգիտէ թէ շոգից ու ծարաւից ո՞ւր թաքնուի։

Եւ Նուրէդդինը արցունքով լի հայեացքը դարձնում էր հօրը։

Առանց խօսելու՝ հայրը հասկանում էր որդու սիրտը, շոյում էր նրա գլուխը և ծառային ուղարկում, որ կանչի մուրացիկ տղին։

Եւ ծառան հրաւիրում էր մուրացկանին Նուրէդդինի հօր հիւրասէր յարկի տակ հանգիստ վայելելու։

Աղքատին հագուստ ու կերակուր էին տալիս, քաղցր խօսքերով մխիթարում էին։ Եւ նա այնտեղից դուրս էր գալիս ուրախ ու զուարթ, երկինքն օրհնելով։

Յետոյ, երբ Նուրէդդինը մեծացաւ և կարող էր արդէն իր կամքով գործել, սրտի ուզածն անել, յաճախ առաւօտը վաղ՝ առանց մարդու բան ասելու, դուրս էր գալիս տանից ու գնում։

Այդ գիտէին աղքատներն ու անտունները, հիւանդներն ու խեղճերը։

Եւ նա օգնում էր նրանց, որքան որ կարող էր։ Նորա հայրը առատաձեռն էր և որդուն միջոց էր տալիս աղքատին չքաւորութիւնից ազատելու։

Բայց ամենքից շատ Նուրէդդինը սիրում էր խնամք տանել հիւանդներին ու տկարներին,

անդամալոյծներին ու անտէրներին։ Նա ծառայում էր նրանց և դեղ տալիս. չէր զզւում ոչ մի հիւանդից, չէր վախենում վարակուելուց։ Նրա հասցրած սիրալիր օգնութիւնն ու բարի խօսքը մեծ մխիթարանք էր ճնշուածին և զրկուածին. նրա զթոտ խնամքը փափկացնում ու փրկում էր Աստուծոյ ու մարդոց դէմ չարացած անբաղդ սրտերը։

Շատ անգամ էին տեսնում քաղաքացիք, թէ ինչպէս երեկոները տուն էր դառնում նա որևէ մուրացկի ու հիւանդի հետ։ Նրան շրջապատում էին և ուրախ աղաղակներով ուղեկցում քաղաքի երեխաները։

Ծուն բերելով՝ Նուրէդդինը հոգում էր հիւրի ամէն մի կարիքը և յետոյ դուրս գալով՝ նստում էր գետնի վրայ. նրան շրջապատում էին երեխաներ և նա պատմում էր նրանց հրաշալի հեքեաթներ, երգում էր նրանց հետ երգեր ու աղօթքներ։

Այդ բոլորը անում էր այնպէս հանդիստ, համեստ ու աննկատելի կերպով, որ քչերն էին տեսնում նրա բոլոր գործերը։

Շատ անգամ նոյնիսկ նրա հարազատ եղբայրը, Ջաֆարը, զարմանում էր և չէր հասկանում թէ ի՞նչ բաւականութիւն է միշտ այդպիսի գործերով զբաղուելը։

Այդպէս էին մեծանում երկու եղբայրները և չնայելով նրանց բնաւորութեան ու ցանկութիւնների տարբերութեան՝ նրանք իրար հետ հաշտ էին և սիրում էին միմեանց։

Բ

Ջաֆարը քսան տարեկան դարձաւ։ Նա երազում էր, թէ ի՛նչպիսի գործեր, ի՛նչպիսի երևելի, փառաւոր գործեր պէտք է կատարէ, ի՛նչպիսի անուն պէտք է վաստակէ։

Նա զարգացած էր, տաղանդաւոր, ճարպիկ՝ ոյժով ու խելքով։ Ոչ ոք Մուսուլում նրա նման ծի չէր նստում, ոչ ոք նրա նման նշան չէր առնում։

—Փառք, փառք, ինձ փառք պէտք է, մտածում էր միշտ պատանի Ջաֆարը։

Եւ երկինքը կատարեց նրա ցանկութիւնը։

Մուսուլի խալիֆը հարևան երկրի դէմ պատերազմ բացեց։ Երկու կողմերն էլ կռւում էին կատաղութեամբ։ Խալիֆի ամենալաւ զօրապետներն ընկան և զօրքը սկսեց պարտութիւններ կրել։

Ջաֆարը վճռեց, թէ փառք վաստակելու ժամը հասել է, և սկսեց հօրը խնդրել, որ թոյլ տայ իրան պատերազմ երթալու։

—Ես կը վերադառնամ փառքով, մեծ մարդ դարձած, ով հայրիկ, ասում էր Ջաֆարը մնաս բարևի ժամանակ։

Հայրը լռեց և տխրութեամբ որդուն ճանապարհ դրեց։

Անցան տարիներ. մէկ, երկու, երեք... վերջապէս պատերազմը դադարեց։

Այդ տարիների ընթացքում երիտասարդ Ջաֆարը իւր քաջութեամբ ու խելքով յայտնի դարձաւ և քիչ ժամանակ անցած՝ զօրավար նշանակուեց։

Նա չարաչար յաղթեց իր թշնամիներին, ցրեց նրանց զօրքը, նուաճեց մի քանի քաղաք և բազմաթիւ գերիներ բերեց։

Նրա յաղթութիւնների շնորհիւ խալիֆի երկիրը մեծացաւ, նուաճուած քաղաքները պարտաւորուեցան հարկ վճարել։

Եւ ահա Մուսուլի համար մեծ տօն էր. պատրաստւում էր մի հաղուագիւտ, չտեսնուած, փառաւոր հանդէս։ Երևելի զօրապետը իւր զօրքի ու գերիների հետ վերադառնալով պատերազմից՝ պէտք է փառքով անցնէր իւր հայրենի քաղաքից, որ ճանապարհի վրան էր գտնուում։

Ամբոխը խմբուել էր քաղաքի դռան մօտ։ Գորգեր ու ծաղիկներ ծածկում էին Ջաֆարի

ուղին։ Ջաֆարը իր հայրենի քաղաքի պարծանքն էր, փառքը, խալիֆի սիրելին էր։

Ծերեր ու երիտասարդներ, կանայք ու երեխաներ ամենքը անհամբեր ցնծութեամբ սպասում էին, ակնապիշ նայում էին այն կողմը, որտեղից իրանց պարծանքը պէտք է երևար։

Ահա երևաց հանդարտաշարժ շքեղաշուք գնացքը։

Ամենքից առաջ, հրաշալի սպիտակ ձի նստած, գալիս էր Ջաֆարը։

Ամբոխն ալեկոծուեց, հաղարաւոր հետաքրքրքիր հայեացքներ դարձան վրան և ոգևորուած ու ցնծալից աղաղակները ողջունեցին նրան։

Հերոսի յետևից գալիս էին զինուորներով շրջապատուած շղթայակապ գերիներ։

Ծերունի Մահմեդ-Ալին որդուն դիմաւորելու համար քաղաքից դուրս չեկաւ, այլ սպասեց նրան իր տան առաջ, փոքր որդու ուսին կռթնած։

Հայրական տաներ մօտենալով՝ Ջաֆարն իջաւ ձիուց և զգացուած, յուզուած, զուարթ դէմքով մօտեցաւ Ծերունի հօրը։ Զորս կողմը լռութիւն տիրեց. հերոսը մինչև գետին խոնարհեց գլուխը, և երբ Ծերունի հայրը բարձրացնելով նրան փաթաթուեց, Ջաֆարը ցածր ձայնով հարցրեց.

—Հայր, արդեօք ես մեծ չե՞մ։

—Ոչ, որդիս, հազիւ լսելի ձայնով պատասխանեց Ծերունին։

Այս խօսքերը ոչ ոք չլսեց, բայց ամենքն էլ տեսան, թէ ինչպէս մթագնեց այն մարդու երեսը, որի հայեացքից սարսափահար ու շփոթուած փախչում էին թշնամիները. տեսան թէ ինչպէս գլուխը քաշ դցած մօտեցաւ ծիուն և թռչելով նրա վրայ՝ տխուր ու մտածկոտ շարունակեց ճանապարհը։

Նրան այլ ևս չէին ուրախացնում ոչ ամբոխի ոգևորուած աղաղակները, ոչ նրա ճանապարհը ծածկող ծաղիկները։

Շուտով լուր տարածուեց, թէ մեծ զօրապետը, պետութեան յոյսն ու ապաւէնը անյայտացել է։

Գ

Անցան տարիներ։

Արևելքի մեծ պետութիւններից մէկում երևաց մի երիտասարդ գիտնական։

Նրա անունը ամենքին յայտնի էր։

Ամեն տեղ խօսում էին, թէ ինչպէս զարմանալի շնորհքով բժշկել է նա թագաւորի անբուժելի հիւանդութիւնը։

Պատմում էին, որ թագաւորն առաջարկել է գիտնականին խնդրել իրանից, ինչ որ

սիրան է ուզում, և թէ կստանայ ցանկացածը, որքան էլ այն թանկ արժէնայ։

Երիտասարդ գիտնականը խնդրեց այն անապատը, որ Թագաւորի երկրի մէջ ահագին տարածութիւն էր բռնում։ Նա ջրելու և հողն արգաւանդ դարձնելու նոր միջոց հնարեց և կարճ ժամանակում անապատը բուրաստան դարձրեց։ Ապա այդ հողը նուիրեց պետութեան։

Ահագին տարածութիւններն՝ որ առաջ անապատ էին, այժմ բնակատեղի դարձան։ Երկրի հարստութիւնն աւելցաւ. բոլոր ժողովուրդը փառաբանում էր երիտասարդ գիտնական Զաֆարին, որ բնութեան գաղտնիքներն էր հասկացել։

Մի անգամ, ամառուայ խաղաղ երեկոներից մէկում, Մուսուլ մտաւ համեստ հագնուած մի երիտասարդ և Մահմեդ-Ալիի պալատը հասնելով՝ դուռը ծեծեց։ Երբ ծառան դուռը բացեց, երիտասարդը՝ երեսը ծածկած, խնդրեց որ իրան տան տիրոջ մօտ տանեն։

Ծառան սկզբում չէր համաձայնում խորհրդաւոր անծանօթին ներս թողնել, բայց վերջապէս լսելով նրա թախանձանքին՝ եկուորին տարաւ իւր տիրոջ ննջարանը։

Ալեւոր Մահմեդ-Ալին, թեկն ընկած դիւանին՝ սուրճ էր խմում։

Անծանօթը համեստութեամբ կանգ առաւ դռան մօտ և սովորական ողջոյնի խօսքերն ասաց։

Նրա ձայնից ծերունին վեր թռաւ.

—Զաֆար, դո՞ւ ես։

—Ե՛ս եմ, պատասխանեց Զաֆարը։

—Ո՞րտեղ էիր մինչև այժմ, դոչեց հայրը և փաթաթուեց որդուն։

—Ես փառք էի որոնում և ահա գտայ։ Ասա՛, արդեօք դու ոչինչ չե՞ս լսել Թագաւորին բուժող հռչակաւոր բժշկի մասին։ Արդեօք չե՞ս լսել այն երևելի գիտնականի մասին, որն անապատը բուրաստան դարձրեց։ Այժմ եկել եմ քեզ մօտ ոչ որպէս երկիր քանդող, ոչ իբրև սպանող, այլ խաղաղութեան ձիթենին ձեռքիս։ Բոլոր ժողովուրդը, ամեն ազգ, թէ՛ բարեկամ և թէ թշնամի, իմ անունն են փառաբանում։ Ասա՛, այժմ անշուշտ ինձ մեծ մարդ ես համարում, այնպէս չէ՞։

Ծերունին տխրութեամբ գլուխը շարժեց։

—Ո՛չ։

—Դարձեա՛լ ոչ, գոչեց որդին հօր պատասխանից շփոթուած։ Եւ ծանր ախ քաշելով, խոնարհ գլուխ տուեց հօրն ու դուրս գնաց։

Նա հեռացաւ հայրենի քաղաքից։

Դ

Դարձեալ տարիներ անցան։

Արևելքի բոլոր քաղաքներում կարդում էին նոր յայտնի գրողի ոտանաւորները։ Էին գրողների փառքը նսեմացաւ, նսեմացաւ նրա առաջ՝ ինչպէս խաւարում են աստղերը արեգակի փառաւոր լոյսի առաջ։

Նրա ոտանաւորները կարդում էին ամեն տեղ, կարդում թէ՛ Ծերունիները, և թէ՛ երիտասարդները, և փառաբանում էին Ջաֆարի անունը։

Նրա փառքը հասաւ Հայրենի Մուսուլին։

Մուսուլի խալիֆը՝ լսելով նրա անունը, հրամայեց գտնել նրան և հրաւիրել իր պալատը, պալատական գրող լինելու։

Բայց Ջաֆարը թաղնուում էր անյայտութեան մէջ և ոչ ոք նրան չէր տեսել, ամենքը նրա հռչակաւոր անունը լսելով էին միայն ճանաչում։

Մի օր վաղ առաւօտ Մահմեդ-Սլիի դռանը մօտեցաւ փոշոտուած, յոգնած մի ճանապարհորդ, գաւազանը ձեռքին։ Զնայելով նրա հագուստին և նիհար ու յոգնած դէմքին՝ ծառաները իսկոյն ճանաչեցին Ջաֆարին։

Տունը լցուեց ուրախութեան աղաղակներով։

Ջաֆարին տարան հօր մօտ, որը առաւօտուայ աղօթքն էր կատարում։

Տարիները կռացրել էին Ծերունկին, կընճիռները դէմքն էին ծածկել։ Աղօթքը վերջացնելով՝ նա դարձաւ որդուն նոյն պարզ հայեացքով, խելք ու բարի, անչափ սէր արտայայտող դէմքով։

—Ահա ես դարձեալ եկայ քեզ մօտ, հայր, և ուզում եմ քո դատավճիռը լսել։ Իմ ոտանաւորները հոգեկան մխիթարութիւն ու բաւականութիւն են պատճառում ամենքին, և՛ հարուստին և՛ աղքատին։ Իմ անունը յաւիտեանս պէտք է փառաւորուի, իմ գրածները երբէք չեն մոռացուիլ և իմ մահից յետոյ էլ նրանք կը կարդացուին, ինչպէս և այժմ։ Ասա, արդեօք այժմ էլ մեծ մարդ չեմ։

Ծերունին բարձրացրեց որդուն գետնից և պինդ փաթաթուելով կամաց շնչաց.

—Յաւում եմ վրդ, որդեակս, բայց ճշմարտութիւնը պէտք է ասեմ.—դու չես հասկանում, թէ ինչի մէջ է իսկական մեծութիւնը։

—Բայց ես նրան կգտնեմ, գոչեց Ջաֆարը։

—Նրան որոնելով չես գտնիլ, պատասխանեց հայրը։

Ջաֆարը գլուխը խոնարհելով՝ դուրս եկաւ հայրենիքից։

1651
47419
ԱՌԱՔ-ՀՐԱ.

Ե

Անցաւ հինգ տարի։

Մի խաղաղ լուսնեակ գիշեր Ծերունի Մահմեդ-Ալին իւր տան կտուրը դուրս եկաւ մաքուր օդ շնչելու։ Նա մտքերի մէջ խորասուզուած՝ նայում էր պարզ աստղալից երկնքին։

Ցած նայելով՝ յանկարծ մի մարդ նկատեց, որ անվստահութեամբ շրջում էր պալատի պատերի տակ և կարծես չէր համարձակւում դուռը ծեծել։ Ծերունին սկսեց լաւ գիտել և տեսաւ, որ շրջողը ցնցոտիներ հագած մի մարդ է։ Բոբիկ ոտքերից և բաց գլխից Մահմետ-Ալին ճանաչեց, որ այդ մարդը անապատական-դարվիշ է։ Ապա Ծերունին ցած թեքուեց և կանչեց.

—Անցորդ, համարձակ ծեծիր դուռը։ Իմ տունը միշտ բաց է ճանապարհորդների առաջ թէ գիշեր և թէ ցերեկ։

Այդ ձայնը լսելով՝ դարվիշը ցնցուեց և պատից յետ քաշուեց։ Աչքերը վերև ուղղեց, որ տեսնի խօսողին։ Լուսինը լուսաւորեց նրա գալկացած յոգնած դէմքը։

Եւ յանկարծ Ծերունին, լաւ գիտելով նրան, ճանաչեց որ սա իւր որդին է, թէև ծերացած ու արդէն մաշուած։

—Ջաֆար, որդի՛ս։

—Հայր, լսուեց ցածրից և հեկեկանքները խեղդեցին Ջաֆարի ձայնը։ Հայր, նայիր, ես հրաժարուեցայ աշխարհի ամեն վայելքներից։ Հարստութիւն, պատիւ, փառք—բոլորը դատարկ բաներ են, ես այդ հասկացայ։ Եւ ահա հեռացայ անապատ և միայն Աստուծունեութեան իմ բոլոր մտածմունքներս ու կեանքս։ Ես ծառայում եմ Ալլահին խիստ պասով ու ծոմով, անդադար աղօթելով և ծանր գրկանքներ կրելով։ Եւ միայն Ալլահից եմ սպասում փառքի պսակը։ Ես հրաժարուեցայ աշխարհային փառքից և հասկացայ, թէ որքան չնչին ու փոքր էի հպարտութեամբս։ Եւ այժմ ահա ինձ սուրբ են անուանում, և աշխարհի ամեն ծայրերից ինձ մօտ աշակերտներ են գալիս։ Բայց այդ բոլորը ինձ չէ ուրախացնում, և միայն քո դատավճռին եմ սպասում։ Ասա՛, հայր, արդեօք քեզ չե՞մ հասկացել, հասել եմ արդեօք իսկական մեծութեան։

Եւ Ջաֆարը լռեց։ Սրտի բարախումով պատասխանի էր սպասում։

Ծերունին լուռ տխրութեամբ նայեց նրան և ասաց։

—Քո ինչի՞ն է պէտք իմ հաւանութիւնը, որդի։ Սեփական խիղճդ քեզ ասում է, որ իսկական մեծութեան ճանապարհը չես գտել,

որովհետև քո մէջ դեռ կենդանի է հպարտութեան ու եսասիրութեան ոգին։

Այդ պատասխանը կայծակի նման հարուածեց Ջաֆարին։ Նա պատին յենուեց և դառնութեամբ հեկեկաց։ Ծերունին շտապեց կուրծից իջնել, որ որդուն ներս տանէ, բայց մինչև դուրս գալը Ջաֆարն արդէն անհետացել էր։

Զ

Շուտով երկիրը սարսափելի դժբաղդութեան մէջ ընկաւ։ Դարձեալ կատաղի կռիւ սկսուեց հարևան խալիֆի հետ։ Նա առիթ էր որոնում կռիւ սկսելու և յետ դարձնելու այն քաղաքները, որ խլել էր Ջաֆարը առաջին պատերազմի ժամանակ։

Այս անգամ Մուսուլի խալիֆի զօրքը չկիմացաւ կատաղած Թշնամու յարձակմանը։ Նրա մի մասը ջարդուեց, միւս մասը փախուստ տուեց։ Թշնամին շատ քաղաքների տիրեց, ի միջի այլոց և Մուսուլին։

Յատկապէս Մահմեդ-Ալին մեծ կորուստներ ունեցաւ. Թշնամին նրանից՝ որպէս Ջաֆարի հօրից, հանում էր իւր ոխը. Ջաֆարին Մուսուլում չգտնելով՝ նրանք թալանեցին ու աւերեցին այն բոլորը, որ ունէր Ծերունի Մահմեդ-Ալին։

Կորան դարերի ընթացքում հաւաքուած գանձերը։ Հրդեհը լափեց շքեղ պալատները։ Ծառաների մի մասը կոտորուեցաւ, միւս մասը գերի տարուեցաւ։

Բայց Ծերունու համար ամենից ծանր էր տեսնել, թէ ինչպէս գլխից վիրաւոր Նուրէդդինին շղթայակապ գերի են տանում, որ իւր Ծերութեան ուրախութիւնն ու մխիթարութիւնն էր։

Եւ Նուրէդդինին ողբացողը միայն նրա հայրն ու ընտանիքը չէին։

Մուսուլի բնակիչներն, մանաւանդ աղքատներն ու տնանկները բարձր հեկեկանքներով ու ողբերով ճանապարհ էին դնում իրանց սիրելուն։

Եւ նա գնում էր հանդիստ և հեղ, գլուխը խոնարհած. նրա աչքերը լի էին արցունքով. տխրութեամբ դիտում էր հայրենի քաղաքն ու թանկագին բարեկամներին։

Մահմեդ-Ալին չէր ափսոսում ոչ իր նախկին հարստութեանը, ոչ փարթամ կեանքին։

Բայց նրա սիրտը կտրատւում էր, երբ որդու մասին էր մտածում և տեսնում Նուրէդդինի կնոջ տխրութիւնը։

Ցաւից ու լացից Ծերունու տեսողութիւնը նուազեց և նա շուտով բոլորովին կուրացաւ։

Բայց ինայելով իր մեծամեծ կորուստներին և կուրութեանը՝ Մահմեդ-Ալին առաջուայ նման հաւասարապէս օգտակար էր ամեն մարդու.—երբ նա տեսնում էր ընկերոջ դժբաղդութիւնը, իր սեփական ցաւը մոռանում էր:

Երբ իր ջահիլ հարսի հետ մաշուած հագուստով, կռացած, անցնում էր շուկայից, մարդիկ նոյնպիսի քաղցրութեամբ դիմաւորում էին նրան և սիրալիր հրաւիրում իրանց մօտ հանգրստանալու: Շատերն այնտեղ դիմում էին նրա խորհրդին և կամ մխիթարական խօսք լսելու, և նա առաջուան պէս ուրիշների ցաւն ու դարդը իւր սրտին մօտ էր ընդունում և օգնութիւն հասցնում:

Նա Նուրէդդինից մխիթարութիւն և օգնութիւն ստացող բոլոր խեղճերի բարեկամը դարձաւ: Սիրում էր նրանց հետ ժամանակ անցկացնել և լսել նրանց պատմութիւնները՝ Նուրէդդինի ողորմութեան ու սիրոց սրտի մասին:

Մահմեդ-Ալիի հին հարուստ բարեկամներից մի քանիսը առաջարկում էին ոչ միայն պատրաստի բնակարան, այլ և նորից առևտուր սկսելու համար մեծ գումարներ: Բայց Մահմեդ-Ալին անխռով ու հաւասարապէս մերժում էր ուրիշներից օգնութիւն ստանալ, որովհետև գիտէր որ ծերութեան հասակումն է և չի կա-

րող հատուցանել իւր պարտքերը և իւր դրժբախտութիւնը Ալլահի կամքն էր համարում. նա մարդկանցից այնքան էր օգնութիւն վերցնում որ սովամահ չմեռնի:

Ամենքը զարմանում էին թէ ինչպիսի համբերութեամբ ու տոկունութեամբ դիմանում է նա իւր ծանր վիճակին:

Բայց ոչ ոք չէր տեսնում, թէ ինչպէս խեղճ ծերուկը դիշերները տան կտուրին նստած՝ ողբում էր և խորը հառաչանքով գոչում.

—Որդիքս, ա՛խ որդիքս:

Է

Միայն մի մարդ լսեց ծերունու հառաչանքները:

Դա Ջաֆարն էր, որ նորից վերադարձել էր անապատից:

Նա շատ էր թափառել, որ գտնի մեծ մարդ լինելու ճանապարհը: Վերջիվերջոյ նրա խելքը ու մարմնի ոյժը քայքայուեց և այնուհետև իրան մեծ գործ կատարելու անընդունակ համարելով, վհատեցաւ և մինչև իսկ մտածում էր ինքնասպանութիւն գործել:

Նա բռնեց Մուսուլի ճանապարհը, որպէս զի վերջին անգամ տեսնի հօրն ու եղբօրը, և վերջին հրաժեշտը տայ նրանց:

Եւ յանկարծ ճանապարհին հարեւան գիւղերի բնակիչներից լսեց Մուսուլի ղլխին հասած դժբաղդութիւնը, իմացաւ թէ ի՞նչ վիճակի էին իւր հայրն ու եղբայրը։

Այդ լուրը Ջաֆարին սարսափահար արեց. նրան տանջում էր մանաւանդ այն միտքը, որ ինքն փառքի յետևից ընկնելովը՝ հօր դժբախտութեան գլխաւոր պատճառն էր դարձել։

Ջաֆարը գիշերով միայն կարողացաւ հասնել իւր հայրենի քաղաքը։

Իր հօր պալատի տեղ այժմ աւերակներ միայն տեսաւ և սրտի կսկիծով սկսեց թափառել դատարկ փողոցներում։

Այդպէս թափառելիս մի տան կտուրին նա մի կռացած ծերունի տեսաւ։

Ծերուկը նստել էր, չոր ձեռներով բռնել ծնկները և յուսահատութեամբ օրօրւում էր.

—Ա՜խ, որդի՛ք, որդի՛ք, լսուեց ծերունու հեծկլտացող ձայնը։

Ջաֆարը յուզուած սկսեց դիտել ծերունու դէմքը, որ լուսաւորուած էր լուսնի լուսով։ Եւ նա ճանաչեց իր հօրը։ Եւ արդէն ուզում էր ձայն տալ նրան, երբ կտուրը բարձրացաւ իր եղբօր մանկամարդ կինը։ Հարսը չոքեց ծերունու առաջ, գլուխը դրեց նրա ուսին և սկսեց խորը հառաչել։ Ծերունին քաղցրութեամբ շոյեց նրա գլուխը և ցածր ձայնով մի բան շշնջաց։ Ջաֆարը վերջին խօսքերը միայն լսեց.—

—Ես դեռ յոյս ունեմ, որ Ջաֆարս կը վերադառնայ և այն ժամանակ այսպէս մենակ չենք լինիլ։

Բայց հարսը, Նուրէդդինի կինը, յուսահատութեամբ գլուխը շարժեց.—

—Ո՛չ, ասաց, Ջաֆարը չի կարող փոխարինել Նուրէդդինին, նա ինձ համար օտար մարդ է, ես նրան չեմ ճանաչում։ Նա հանդիսատ ընտանեկան կեանքի համար էլ ստեղծուած չէ, միայն իրան է սիրում և միայն անձնական փառքն է որոնում։

—Այդ ճշմարիտ է, հարսս, տխրութեամբ ասաց ծերունին, բայց դու չես ճանաչում նրա այնիւ ու վեհանձն հոգին։ Եթէ իմանար, որ մենք դժբաղդութեան մէջ ենք, անպատճառ մեզ օգնելու համար ամէն բան կանէր, ինչ որ կարող էր անել։

Մանկամարդ կինը դառնութեամբ պատասխանեց.

—Ես երբէք չեմ ներիլ Ջաֆարին, քանի որ մեր դժբաղդութեան պատճառը դարձաւ։ Եթէ Ջաֆարը չլինէր, Նուրէդդինը այժմ գերութեան մէջ չէր տանջուիլ։

Զաֆարն այլ ևս չկարողացաւ ականջ դնել։

Նրա ամեն մի խօսքը դանակի պէս խոցում էր իւր սիրտը։ Հեկեկանքները խեղդեցին նրան, և երկու ձեռքով գլուխը բռնած՝ փախաւ սարսափելի տեղից։

Քաղաքից դուրս կանգ առաւ Զաֆարը, ծունկ չոքեց և դառն արցունքով սկսեց Ալլահին խնդրել, որ ընդունի իւր զղջումը և սովորեցնէ թէ ինչ պէտք է անել։ Ամբողջ գիշերն անցկացրեց մտածմունքի մէջ և Ալլահին աղօթելով. առաւօտեան արդէն գիտէր թէ ինչ պէտք է անէր։

Զաֆարը հրաժեշտ տուեց հայրենի քաղաքին և առանց կանգ առնելու անցաւ գիւղից գիւղ, քաղաքից քաղաք, կերակրուեց ողորմութեամբ և վերջապէս հասաւ Նուրէդդինին դերի տանող թշնամու մայրաքաղաքը։

Ը

Զաֆարը հասաւ թշնամու գլխաւոր քաղաքը. յիշեց՝ թէ ի՞նչպէս մի օր այս քաղաքն էր մտնում յաղթական փառքով, ի՞նչպէս իւր առաջ ամեն ինչ խոնարհվում էր. իսկ այժմ մտնում է ցնցոտիներով, որպէս մուրացիկ։

Գալով խալիֆի քաղաքը, սկսեց խնդրել որ իրան թոյլ տան խալիֆին տեսնելու և իւր

խնդիրը յայտնելու, բայց պահապանները նրան հեռացնում էին։

Բայց նա պալատից չհեռացաւ է լսելով որ խալիֆը զբօսնելու պէտք է գնայ, նրան սպասեց։

Այսպէս սպասեց ամբողջ երեք օր։

Հարաւային արևը այրում էր նրան. անապատի քամին փչում էր և նրա գլխին տաք կրակ դարձած աւազ թափում։ Բայց նա վճռել էր պալատի դռնից չհեռանալ, միմիայն երբ ողորմութիւն խնդրել պէտք լինէր հարևան տներից։

Վերջապէս չորրորդ օրը խալիֆը պէտք է բաղէով որսի գնար։

Ահա բացուեցան դռները և գեղեցիկ ձիեր նստած դուրս եկան պալատականները։

Ինքը խալիֆը հրաշալի սպիտակ ձիով, ձեռքին բաղէ բռնած, հպարտութեամբ անցնում էր։

Բոլոր տեսնողներն ու անցորդները ծունկ չոքեցին նրա առաջ և ողջունեցին։ Զաֆարը նոյնպէս գլուխը խոնարհեց և չոքած արտասուալից աչքերով դոչեց.

— Լսի՛ր ինձ, ողորմած խալիֆ։

Բայց խալիֆը մուրացիկների հետ խօսելու ժամանակ չունէր. նա առանց կանգնելու անցաւ։

Այդ տեսնելով՝ մօտը կանգնած պահապանն ասաց։

—Սպասիր, երբ որսից դառնայ, այն ժամանակ խնդրիր։ Եւ եթէ որսը յաջող լինի՝ խալիֆը ողորմածութեամբ կը վերաբերուի քեզ, իսկ եթէ ոչ, դիմելդ աւելորդ է։

Ջաֆարը դարձեալ մնաց սպասելու և երբ տեսաւ, որ հեռուից երևում են վերադարձող պալատական ոստոսրդները, առաջ անցաւ, կանգնեց ճանապարհին. երբ խալիֆը մօտեցաւ, դեռին ընկաւ Ջաֆարը և բարձրաձայն աղաչեց, որ լսէ իրան։

Խալիֆը ձին կանգնեցրեց և հարցրեց.

—Ի՞նչ է ուզում այս մուրացիկը։

—Մեծ յաղթող, քաջ զօրապետ, ասաց նա, թող Ալլահը քո սիրտը գութ դնէ, լսիր ինձին սարուկի խնդիրը, որի կեանքը քո ձեռին է։

—Ո՞վ ես, հարցրեց խալիֆը։

—Ես եկել եմ քո աւերած Մուսուլ քաղաքից։ Քեզ մօտ դերութեան մէջ տանջւում է Մահմեդ-Ալիի որդի Նուրէդդինը։ Մտածիր, խալիֆ, ինչի՞դ է պէտք այն թոյլ ու խաղաղ արարածը։ Խղճա՛ նրա կոյր հօրը, արձակիր Նուրէդդինին։

—Ի՞նչպէս համարձակւում ես անհանդգստացնել ինձ այդպիսի դատարկ բաներով, անբաւականութեամբ գոչեց խալիֆը. ոչ ոք իր գերիներին բաց չէ թողնում ձրի։ Գնա ասա, թող ծերունին քեզնից աւելի խելօք դեսպան ուղարկէ, հետո էլ թանկագին նուէրներ, այն ժամանակ միայն ականջ կը դնեմ նրա դեսպանին։

Եւ յօնքերը կիտելով՝ խալիֆը ուզում էր առաջ անցնել, բայց Ջաֆարն աւելի կսկծալի ձայնով աղերսեց.

—Խալիֆ, մինչև վերջը լսիր խնդիրս։ Ծերունի Մահմեդ-Ալին քո պատերազմների պատճառով բոլորովին աղքատացել է։ Նա ոչինչ չի կարող տալ քեզ իր որդու փոխարէն։ Ես եկել եմ Նուրէդդինի փոխարէն նրա միւս որդուն Ջաֆարին առաջարկելու քեզ որպէս գերի։

—Ջաֆարին, գոչեց խալիֆը, իմ հօր այն ամենակատաղի թշնամուն, այն Ջաֆարին, որ այնքան դժբաղդութիւններ է բերել մեր երկրի գլխին, արեան գետեր է հոսեցրել մեր հայրենիքում։ Ո՜հ, եթէ նա իմ ձեռքն ընկներ, տալիս եմ իշխանական հաստատ խօսք, որ առանց տատանուելու նրա փոխարէն կը տայի իմ գերիներից որին որ ուզէին։

—Վկայ եմ կանչում Ալլահին, որ Ջաֆարը հէնց այն օրը քո գերին կը լինի, երբ կարձակես Նուրէդդինին, ասաց Ջաֆարը։

—Չէ, առաջ նրան բեր ինձ մօտ, յետոյ կարծակեմ Նուրէդդինին։

Մի քանի վայրկեան Զաֆարը տատանու�էր. բայց յետոյ, մարմինը ուղղելով համարձակութեամբ խալիֆի աչքերին նայեց ու հաստատ ձայնով ասաց.

—Բռնիր ինձ, Զաֆարը ե՛ս եմ։

Շուրջը կանգնած մարդիկ սարսափած յետ քաշուեցան։ Խալիֆը երկար դիտում էր խոնջացած մուրացկին և աշխատում էր ճանաչել իր նախկին հռչակաւոր թշնամուն։

—Արդեօք ճի՞շտ ես ասում,—կարծես թէ մտածում էր խալիֆը, առանց աչքերը հեռացնելու հերոսից։

—Եթէ ասածդ ճշմարիտ է, ո՞վ մարդ, դու կարիճ ես, ասաց վերջապէս խալիֆը։ Իսկ դու ի՞նչ կանես, շարունակեց նա հեգնութեամբ, եթէ քեզ ցցի վրայ նստացնեմ և եղբօրդ էլ չարծակեմ։

—Ես քո ծեռքումն եմ, մեծ խալիֆ, հանգստութեամբ պատասխանեց Զաֆարը, թէև պէտք է իմանաս, որ քո երկիրն եմ եկել ոչ որպէս թշնամի, այլ որպէս անդէն թափառական։ Բայց ես յանձնում եմ ինձ քո իշխանութեան, արա՛ ինչ որ ուզում ես, միայն թէ արծակիր եղբօրս։ Նա անմեղ է, նա քո մի դինուորին անգամ չի դիպել, խղճա նրան։

Ո՞հ խալիֆ, Ալլահը թոյլ չի տալ, որ նենգութեամբ վերաբերուես իմ խնդրին և ինձ դաւաճանես։ Ես ինքս քեզ մօտ եկայ՝ դնելով յոյսս քո ողորմածութեան ու արդարասիրութեան վրայ։

Խալիֆը յօնքերը կիտած լսում էր նրան։ Զաֆարի համարձակութիւնն ու մեծահոգութիւնը, վեհանձնութիւնն ու պարզութիւնը նրան ապշեցրել էին։

Նա մի բոպէ մտածեց, ապա գլուխը բարձրացնելով ասաց.

—Լաւ, վաղը կտեսնենք, իսկ այժմ բռնեցէք դրան, ասաց ծառաներին և պալատ մտաւ։

Զաֆարին շղթայեցին և բանտ տարան։

Թ

Միւս օրը խալիֆն ուզեց ստուգել՝ թէ արդեօք եկողը իրաւ Զաֆարն էր և հրամայեց, որ անսպասելի կերպով երկու եղբայրներին իրար մօտ բերեն։

Եղբայրները, իրար տեսնելիս, հեկեկացին և գրկախառնուեցան։

—Զաֆա՛ր, Զաֆար, դո՞ւ էլ այստեղ ես, զառնութեամբ գոչեց Նուրէդդինը։

Զաֆարը վճռեց չասել եղբօրը՝ թէ ինչ դիտաւորութեամբ է եկել այնտեղ։

— Մեր խեղճ հայրը, քո կինը շատ են ողբում քեզ համար, սիրելի եղբայրս, ասաց Զաֆարը։

Նոյն օրը խալիֆը հրաման արձակեց, որ Նուրէդդինին ազատեն, իսկ Զաֆարին շղթայակապ ծանր փականքների տակ պահեն։

Նուրէդդինը երկինքն օրհնելով դուրս եկաւ բանտից, չիմանալով թէ ի՞նչն էր խալիֆի այդչափ ողորմածութեան պատճառը։ Նա խալիֆի մայրաքաղաքում ճանապարհի համար ողորմութիւն հաւաքելիս՝ լսեց իր եղբօր մեծահոգի քաջութեան պատմութիւնը և հասկացաւ, թէ ո՞րքան թանկ գնով է ձեռք բերած իր ազատութիւնը։ Նորից վերադարձաւ բանտ և սկսեց հարց ու փորձ անել պահպաններին։

Այդ ժամանակ նա սկսեց յուսահատութեամբ արտասուել և ձեռները կոտրատել։ Նա աղաչում էր բանտապետին, որ խալիֆին խնդրէ և փոխել տայ վճիռը։ Նրան պատասխանեցին, որ խալիֆը իւր հօր տուած խոստումն է կատարում։ Նրա հայրը մահից առաջ պարտք էր դրել որդու վրայ, որ Զաֆարից վրէժ առնէ, բայց նա՝ ողորմած խալիֆը՝ յարգելով Զաֆարի քաջութիւնն ու մեծահոգութիւնը, խնայում է իր և իր երկրի կատաղի թշնամուն և խոստանում է չսպանել, միայն թէ նա փախչելու փորձ չանէ։

Նուրէդդինի դառն դժբաղդութիւնը տեսնելով՝ բանտապետը թոյլ տուեց նրան վերջին անգամ տեսնել եղբօրը։ Զաֆարը մնաս բարև ժամանակ հանգստութեամբ ասաց.

— Գնա՛ խաղաղութեամբ, սիրելի եղբայրս։ Ասա՛ հօրս, որ այս գործեցի Ալլահի կամքով։ Իմ խիղճը այն ժամանակ միայն կը հանգստանայ, երբ դու վերադառնալով կը մխիթարես հօրս և ընտանիքիդ։ Հաւատա՛, որ իմ արաժոմս խիստ երջանիկ եմ զգում ինձ։ Թող Ալլահն օրհնէ քո վերադարձը։

Եւ եղբայրները բաժանուեցան։

Ժ

Եւ ահա Նուրէդդինը դարձեալ իւր հայրենի քաղաքումն է, այնտեղ, ուր վերադառնալու յոյսը բոլորովին կորել էր։

Ցողնած ու տանջուած՝ հազիւ հասաւ քաղաքի հրապարակը և այստեղ թուլացած դեռին ընկաւ ամբոխի մէջ։

Շուտով նրան ճանաչեցին։

Մարդիկ ուրախութեան աղաղակով վազեցին Մահմեդ-Ալիին գտնելու, որ աչքի լոյս տան։

Այդ ժամանակ Ծերունին՝ Նուրէդդինի կնոջ ձեռքից բռնած, քաղաքում ողորմութիւն էր հաւաքում։

Լսելով որդու վերադարձը՝ Ծերունին դողդոջուն քայլերով հաղիւ էր կարողանում հարսի յետևից գնալ։

Ցուղիչ և ուրախալի էր նրանց և Նուրէդդինի տեսակցութիւնը։

Ջաֆարի վարմունքը լսելով՝ Մահմեդ-Ալին աչքերը երկինք բարձրացրեց, յայտնեց իր շնորհակալութիւնն Ալլահին և ուրախութեան ու սիրոյ արցունքներ երևեցան նրա աչքերում։

—Իմ որդեակս, Ջաֆարս, ի՞նչպէս եմ ուզում սեղմել քեզ կրծքիս։ Այժմ, միայն այժմ հասար դու ճշմարիտ մեծութեան և անմահութեան, որովհետև այդ գործեցիր ուրիշների համար և քո անձը մոռացար։

Արդեօք Ջաֆարը գերութիւնից վերադարձաւ թէ ոչ՝ յայտնի չէ։ Դրա մասին շատ տեսակ լուրեր են պատում։

Բայց նրա հերոսութեան պատմութիւնը մինչև մեր օրերը ժողովրդի բերանում կենդանի է։ Եւ նրա վարմունքը յաւիտեանս անմոռանալի կը մնայ որպէս սիրոյ և ինքնազոհութեան գեղեցիկ օրինակ։

ՊՐՈԼԵՏԱՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

նոր լոյս տեսած գրքոյկները.

1. Գործար. թէ երկրագործութիւն
2. Սնապաշտութիւն և կախարդութիւն
3. Մտերմական խորհուրդներ պատանիներին
4. Գոյութեան կռիւ (մամուլի տակն է)

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

վերջին հրատարակութիւնները

1. Ընտրութիւն կաթնատուների
2. Ռուդոլֆ Վիրխով

Դիմել հայ գրավաճառանոցները։

ՀՀ Ազգային գրադարան
NL0355107

41135

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

1. Քարը կրգում է
2. Ճշմարիտ մեծությունը

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.